ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՀԿ
ՀՀ, ք. Երևան, Բուզանդի 1/3, 4-րդ հարկ
Հեռ. 56 03 60, էլ. հասցե foi@foi.am, www.foi.am
FREEDOM OF INFORMATION CENTER NGO
1/3 Buzand street, 4th floor, Yerevan, RA

26.03.2014թ.
214-ի 1

ՀՀ մշակույթի նախարար
տիկին Հասմիկ Պողոսյանին

Տեղեկատվություն ստանալու հարցում

Հարգելի տիկին Պողոսյան,

ՀՀ մշակույթի նախարարությունը “Ալ. Սպենդիարյանի անվան օպերայի եւ բալետի ազգային ակադեմիական թատրոն” ՊՈԱԿ-ի տնօրենի թափուր պաշտոնը զբաղեցնելու համար հայտարարել է մրցույթ (http://mincult.am/home-1-1813-page-1.html): Դիմումների ընդունման վերջնաժամկետ սահմանվել է 2014թ.-ի մարտի 15-ը:

Ելնելով վերոգրյալից եւ ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 27 և 27.1 հոդվածների և “Տեղեկատվության ազատության մասին” ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի դրույթներով՝ խնդրում ենք հայտնել,

1. Քանի՞ մարդ է դիմում ներկայացրել “Ալ. Սպենդիարյանի անվան օպերայի եւ բալետի ազգային ակադեմիական թատրոն” ՊՈԱԿ-ի տնօրենի թափուր պաշտոնը զբաղեցնելու համար,
2. Ովքե՞ր են դիմել “Ալ. Սպենդիարյանի անվան օպերայի եւ բալետի ազգային ակադեմիական թատրոն” ՊՈԱԿ-ի տնօրենի թափուր պաշտոնը զբաղեցնելու համար ՀՀ մշակույթի նախարարության հայտարարած մրցույթին (դիմած անձանց անունները, ինչպես նաեւ ներկայումս զբաղեցրած պաշտոնը):

“Տեղեկատվության ազատության մասին” ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի համաձայն՝ տեղեկություն ստանալու գրավոր հարցմանը պատասխան տրվում է այն ստանալուց հետո 5-օրյա ժամկետում: Ուստի, խնդրում ենք տեղեկություն ստանալու հարցումին պատասխանել օրենքով սահմանված ժամկետներում:

Կանխավ շնորհակալ եմ:

ԻԱԿ իրավաբան Գեւորգ Հայրապետյան